

# ԵՊՀ Սոցիալական աշխատանքի և սոցիալական տեխնոլոգիաների ամբիոնի գործունեությունը «Տեմպուս» ծրագրի շրջանակներում

«Տեմպուս» ծրագրի նպատակները և գործառնման բնույթը

«Տեմպուս» ծրագիրը Եվրոպական միության ծրագրերից է, որն ուղղված է բարձրագույն կրթության համակարգի արդիականացմանը Եվրամիության հարակից տարածաշրջաններում (Արևելյան Եվրոպայի, Կենտրոնական Ասիայի, Արևմտյան Բալկանների և Միջերկրածովյան տարածաշրջան): Ծրագիրը հիմնադրվել է 1990 թվականին և նպատակ է հետապնդում ուժեղացնել վերոնշյալ երկրներում գործող բարձրագույն կրթության համակարգը բարձրագույն ուսումնական հաստատությունների համագործակցության միջոցով: Հիմնադրումից ի վերուստ ծրագիրն իրականացվել է 4 փուլով.

**1990-1993- «Տեմպուս I»**

**1994-1998 «Տեմպուս II»**

**1998-2000 «Տեմպուս II bis»**

**2000-2006 «Տեմպուս III»**

**2007-2013 «Տեմպուս IV»**

«Տեմպուս» ծրագիրը նպատակ է հետապնդում նաև բարձրագույն կրթությունը ծրագրի «հետաքրքրությունների շրջանակներում» գտնվող երկրներում համահունչ դարձնել Եվրամիության երկրների բուհական զարգացումներին՝ հիմք ընդունելով լիսաբոնյան օրակարգում և Բոլոնիայի գործընթացում ամրագրված չափանիշները:

«Տեմպուսն» աջակցում է բազմապիսի ծրագրերի իրականացմանը, որոնք ուղղված են նպաստելու գործընկեր համալսարաններում ուսումնական ծրագրերի, ուսումնական ձեռնարկների վերամշակմանը կամ նորերի ստեղծմանը, դասավանդման և ուսումնառության մեթոդների ու հնարավորությունների կատարելագործմանը, ինչպես նաև բարձրագույն կրթության արդյունավետ կազմակերպմանը և համալսարաններում վարչարարական գործընթացների արդյունավետության բարձրացմանը: «Տեմպուս» ծրագրում ընդգրկված գործընկեր համալսարաններին տրամադրվում են դրամաշնորհներ Եվրամիության և գործընկեր երկրների միջև միջբուհական համագործակցության զարգացման նպատակով:

Այսօր «Տեմպուս» ծրագրի գործառնման առաջնահերթությունները կապված են գործընկեր երկրներում բարձրագույն կրթության համակարգերի արդիականացման և ԵՄ հիմնարար դրույթներին վերջիններիս համապատասխանեցման հետ: Որպես այդպիսի առաջնահերթություններ սահմանված են.

1. Ուսումնական ծրագրերի մշակման գործընթացների բարեփոխում և կատարելագործում.

- Ուսումնական ծրագրերի արդիականացումը գործընկեր համալսարանների կողմից սահմանվում է որպես առաջնային նպատակ, իսկ դա նշանակում է ուսումնական ծրագրերի պատրաստում կրեդիտների փոխանցման Եվրոպական համակարգի չափանիշներին համապատասխան, բարձրագույն կրթության կազմակերպումը եռաստիճան համակարգի միջոցով (բակլավրիատ, մագիստրատուրա, ասպիրանտուրա), գիտական աստիճանների ճանաչում:

2. Բարձրագույն կրթության կառավարման գործընթացների բարեփոխում.

- Բարձրագույն ուսումնական հաստատությունների կառավարում և ուսանողներին անհրաժեշտ ծառայությունների մատուցում

- Որակի գնահատման բաղադրատարրի ներմուծում

- Ինստիտուցիոնալ և ֆինանսական ինքնուրույնության ու հաշվետվողականության ապահովում

- Բարձրագույն կրթության մատչելիության ապահովում և բարձրագույն կրթություն ստանալու համար հավասար հնարավորությունների տրամադրում

- Միջազգային կապերի հիմնում ու զարգացում

3. Բարձրագույն կրթության համակարգի և հասարակության կապերի բարելավում.

- Ոչ ակադեմիական միջավայրը ներկայացնող դասավանդողների վերապատրաստումների կազմակերպում և իրականացում

- Ձեռնարկությունների հետ համագործակցային հարաբերությունների հաստատում և զարգացում

- Գիտելիքների ձեռքբերման և ամրապնդման երեք հիմնարար բաղադրատարրերի՝ «Կրթություն-հետազոտություն-նորարարություն», ապահովում

- Հանրային ծառայություններ մատուցող կառույցների ներկայացուցիչների համար վերապատրաստումների կազմակերպում

- Համապատասխան որակավորման շնորհում:

«Տեմպուս» ծրագրի վերաբերյալ առավել մանրամասն տեղեկատվություն կարելի է գտնել <http://eacea.ec.europa.eu/tempus> կայքում կամ «Տեմպուս» ծրագրի ազգային գրասենյակում:

## «Տեմպուս» ծրագիրը Հայաստանում

Հայաստանը մասնակցում է «Տեմպուս» ծրագրին 1995 թվականից սկսած: Այդ ժամանակահատվածից մինչև 2011 թվականը Հայաստանում «Տեմպուս» ծրագրի ծավալած գործունեության շրջանակներում իրականացվել է 45 ծրագիր՝ մեկից-երեք տարի տևողությամբ, որոնց իրագործման համար «Տեմպուս» ծրագրի բյուջեից տրամադրվել է 9.3 միլիոն եվրո ֆինանսավորում:

Հայաստանում «Տեմպուս» ծրագրի գործառնման հաստատումից ի վեր այդ ծրագրին մասնակցել են բազմաթիվ պետական բուհեր, որոնց շարքում կարելի է նշել Երևանի պետական համալսարանը, Երևանի պետական բժշկական համալսարանը, Երևանի ճարտարապետության և շինարարության պետական համալսարանը, Հայաստանի պետական ագրարային համալսարանը, Ռուս-հայկական Սլավոնական համալսարանը, Գորիսի պետական համալսարանը, Գյումրու պետական մանկավարժական ինստիտուտը, Հայաստանի պետական ճարտարագիտական համալսարանի Վանաձորի մասնաճյուղը, Հայաստանի պետական ճարտարագիտական համալսարանը, գեղարվեստի պետական ակադեմիան: Ընդ որում, Հայաստանում «Տեմպուս» ծրագրի կողմից տարբեր ժամանակահատվածներում իրականացվող ծրագրերի մեջ որպես գործընկերներ ընդգրկվել են ոչ միայն բարձրագույն ուսումնական հաստատություններ, այլև պետական ու կրթական այլ կառույցներ, ինչպիսիք են ՀՀ կրթության և գիտության նախարարությունը, Բարձրագույն կրթության որակի ապահովման ազգային կենտրոնը, Միգրացիայի պետական ծառայությունը, Երևանի առևտրաարդյունաբերական պալատը:

ՀՀ-ում «Տեմպուս» ծրագրի շրջանակներում իրականացվող ծրագրերը հիմնականում ուղղված են բարձրագույն կրթության ոլորտում բարեփոխումների իրականացմանը, դասավանդման և ուսումնառության նոր մեթոդաբանության ներդրմանը, ինչպես նաև ուսումնական նոր ծրագրերի ստեղծմանը:

«Տեմպուս» ծրագիրը հայաստանյան բուհերին հնարավորություն է ընձեռում իրականացնելու երկարաժամկետ համագործակցության ծրագրեր, ինչպես նաև նպաստում է ակադեմիական անձնակազմի և ուսանողների շարժունությանը: Բացի դրանից, ծրագիրը

նան նպաստավոր նախադրյալներ է ստեղծում տեղական մակարդակում համագործակցելու համար:

«Տեմպուս» ծրագրի կողմից տրամադրվող օժանդակության միջոցով հայաստանյան բուհերը հնարավորություն են ունենում բարելավելու վարչական, կազմակերպչական և կառավարման գործընթացները, մասնավորապես՝ իրականացնելու հետազոտական աշխատանքներ, դասախոսական անձնակազմի վերապատրաստումներ, ապահովելու ուսանողների շարժունությունը, զարգացնելու շահագրգիռ կողմերի հետ համագործակցությունը, հաղորդակից լինելու գիտական ժամանակակից աշխարհի հետ:

Առավել մանրամասն տեղեկատվություն կարող եք գտնել [www. Tempus. am](http://www.Tempus.am) կայքում:

## **ԵՊՀ Սոցիալական աշխատանքի և սոցիալական տեխնոլոգիաների ամբիոնի մասնակցությունը «Տեմպուս» ծրագրին**

ԵՊՀ Սոցիալական աշխատանքի և սոցիալական տեխնոլոգիաների ամբիոնը հիմնադրվել է 2004 թվականին: Ամբիոնի հիմնադրմանը մեծապես նպաստել է եվրոպական ու ամերիկեյան մի շարք բուհերի հետ համագործակցությունը: Մասնավորապես, ԵՊՀ-ում սոցիալական աշխատանքի գծով կրթությունը հիմնադրվել է ԵՊՀ Սոցիոլոգիայի բաժնի, Լոնդոնի տնտեսագիտական դպրոցի, Կոնեկտիկուտի Սոցիալական աշխատանքի դպրոցի և Ֆրանկֆուրտի բարձրագույն մասնագիտական դպրոցի միջև եղած համագործակցության շնորհիվ: Նշված հաստատությունները 1999-2002 թվականներին որպես գործընկեր համալսարաններ ընդգրկված են եղել «Տեմպուս/Տասիս» ծրագրում: Այդ համագործակցության միջոցով էլ հնարավոր դարձավ «Սոցիալական աշխատանք» բաժնի բակալավրիատի և մագիստրատուրայի ստեղծումը:

2001-2002 թվականների ընթացքում, մասնակցելով «Տեմպուս/Տասիս» ծրագրին, ԵՊՀ սոցիալական աշխատանքի բաժինը Լոնդոնի բաց համալսարանի հետ համագործակցության միջոցով հիմնում է սոցիալական աշխատանքի հեռաուսուցման լաբորատորիան, որը, լինելով հեռաուսուցման առաջին կենտրոնը Հայաստանում, մինչ օրս էլ շարունակում է ակտիվ գործել:

Այսօր «Սոցիալական աշխատանք» բաժինն ունի շուրջ 300 ուսանող: Նրանցից 260-ը Սոցիալական աշխատանքի բակալավրիատի ուսանողներ են, իսկ 40-ը սովորում են սոցիալական աշխատանքի մագիստրատուրայում:

Ներկայումս միջազգային և տեղական մակարդակում իրականացվող համագործակցային տարբեր ծրագրերը շարունակում են էական դեր ունենալ Հայաստանում սոցիալական աշխատանքի գծով կրթության համակարգի զարգացման գործում: Դրա վառ ապացույցն է այն, որ սոցիալական աշխատանքի կրթության բնագավառում առաջատար հանդիսացող ԵՊՀ Սոցիալական աշխատանքի և սոցիալական տեխնոլոգիաների ամբիոնը, մասնակցելով «Տեմպուս 4» ծրագրին, մասնավորապես՝ *«Մագիստրոսական ծրագրեր հանրային առողջության և սոցիալական ծառայությունների գծով (511303-Tempus-1-2010-1-UK-Tempus-JPCR)»* ծրագրին, սոցիալական աշխատանքի մագիստրատուրայում 2012 թվականին հիմնեց նոր մասնագիտացում՝ «Սոցիալական քաղաքականություն և սոցիալական վարչարարություն»: Մագիստրոսական ծրագրի ստեղծումը բխում էր վերը նշված ծրագրի նպատակներից, որն ուղղված է աջակցելու գործընկեր համալսարաններին հանրային առողջության և սոցիալական ծառայությունների գծով մագիստրոսական նոր ծրագրեր հիմնելու գործում: Նոր մասնագիտացման ստեղծման անհրաժեշտությունը պայմանավորված էր նաև մեր երկրում տվյալ ոլորտում մանագետների մեծ պահանջարկով, ինչպես նաև սոցիալական քաղաքականության և սոցիալական աշխատանքի միջև կապի հզորացման կարևորությամբ:

## «Սոցիալական քաղաքականություն և սոցիալական վարչարարություն» մագիստրոսական ծրագիրը ԵՊՀ-ում

ԵՊՀ-ում 2012 թվականին բացված «Սոցիալական քաղաքականություն և սոցիալական վարչարարություն» մագիստրոսական ծրագրի նպատակն է պատրաստել բարձր որակավարում ունեցող կադրեր սոցիալական քաղաքականության և սոցիալական ծառայությունների վարչարարության գծով:

Այսօր մագիստրոսական նոր ծրագիրը գործում է «Տեմպուս» ծրագրի նպատակներին և ԵՊՀ մագիստրատուրայում կրթության կազմակերպման պահանջներին համապատասխան: Նպատակ հետապնդելով պատրաստել սոցիալական քաղաքականության և սոցիալական վարչարարության գծով մասնագետներ՝ «Սոցիալական քաղաքականություն և սոցիալական վարչարարություն» մագիստրոսական ծրագրի շրջանակներում առաջադրվում են 4 տիպի դասընթացներ.

1. Լրացական պարտադիր դասընթացներ
2. Մասնագիտական պարտադիր դասընթացներ
3. Ընդհանուր դասընթացներ
4. Կամրնտրական դասընթացներ

Ծրագրում ընդգրկված ուսանողներն ուսումնասիրում են սոցիալական քաղաքականության, սոցիալական ծառայությունների կազմակերպման և կառավարման, ինչպես նաև սոցիալական քաղաքականության հետ առնչություն ունեցող մի շարք մասնագիտական դասընթացներ, որոնք ներկայացված են **մասնագիտական պարտադիր դասընթացների** խմբում: Այդ դասընթացներն են. «Սոցիալական քաղաքականության պատմություն», «Սոցիալական տեսություններ», «Սոցիալական կառավարման մոդելներ», «Սոցիալական քաղաքականության ռազմավարական պլանավորում», «Սոցիալական ռիսկի կառավարում», «Սոցիալական ապահովության համակարգը ՀՀ-ում», «Սոցիալական քաղաքականության հետազոտման մեթոդները», «Հայաստանի արդի սոցիալական քաղաքականությունը», «Սոցիալական քաղաքականությունը և սոցիալական աշխատանքը», «Աղքատություն և սոցիալական անհավասարություն», «Մակրոպրակտիկա», «Եվրոպական սոցիալական քաղաքականություն», «Կառավարման հոգեբանություն», «Ծրագրերի կառավարում», «Քաղաքականության և ծրագրերի ներդրում»:

**Լրացական պարտադիր դասընթացներն** ընդգրկում են *անզերեն լեզու, մասնագիտական փիլիսոփայության հարցեր*:

**Ընդհանուր դասընթացներն** ուսումնասիրում են ԵՊՀ մագիստրատուրայի բոլոր ուսանողները՝ անկախ մասնագիտությունից: Այդ դասընթացներն են *Տեղեկատվական տեխնոլոգիաները մասնագիտական հետազոտություններում, Մասնագիտական արդիական հիմնախնդիրները*:

**Կամրնտրական դասընթացները** այն դասընթացներն են, որոնք ուսանողին ընտրության հնարավորություն են տալիս մասնագիտական հետքորթություններից և կարողություններից ելնելով՝ ընտրել այն առարկան, որը նա ցանկանում է ուսումնասիրել: «Սոցիալական քաղաքականություն և սոցիալական վարչարարություն» մասնագիտացման շրջանակներում կամրնտրական են հանդիսանում հետևյալ առարկաները՝

*Համայնքային զարգացում / Սոցիալական պետության զարգացման տեսություն,*

*Սոցիալական գործընկերություն / Սոցիալական իրավունք,*

*Սոցիալական բարեկեցությունը II աշխարհի երկրներում / Եվրոպական պատմիչ քաղաքականություն:*

ԵՊՀ «Սոցիալական քաղաքականություն և սոցիալական վարչարարություն» մագիստրոսական ծրագրի ուսանողները կարող են ընտրել և ուսումնասիրել նաև հարակից ծրագրերից առնչվող առարկաներ: «Սոցիալական քաղաքականություն և սոցիալական

վարչարարություն» ծրագրի համար հարակից կարող են համարվել *տնտեսագիտության, իրավագիտության, արվեստաբանության, մշակութաբանության, կրոնագիտության* և մի շարք այլ ոլորտների ուսումնասիրությանը նվիրված առարկաներ:

«Սոցիալական քաղաքականություն և սոցիալական վարչարարություն» մագիստրոսական ծրագրում սովորող ուսանողները նաև հնարավորություն կունենան ներգրավվել Կոնեկտիկուտի (ԱՄՆ) Սոցիալական աշխատանքի դպրոցի հետ կազմակերպվող *on-line* դասընթացին, որի թեման է «*Սոցիալական բարեկեցության քաղաքականությունը ԱՄՆ-ում և երկրորդ աշխարհի երկրներում*»: Այս դասընթացը հնարավորություն է ընձեռում ուսանողներին մասնակցելու Կոնեկտիկուտի համալսարանի հետ իրականացվող *ուսանողների փոխանակման ծրագրին*: Դասընթացի ավարտին ուսանողներին տրվում է *ԵՊՀ և Կոնեկտիկուտի համալսարանի համատեղ վկայական*, որը հավաստում է դասընթացը հաջող ավարտելու մասին:

### **«Սոցիալական քաղաքականություն և սոցիալական վարչարարություն» մագիստրոսական ծրագրում դասավանդող դասախոսական անձնակազմը**

«Տեմպուս» ծրագրի նպատակները հաջողությամբ իրականացնելու համար նախատեսված էր մասնակից համալսարանների դասախոսական անձնակազմերի վերապատրաստում գործընկեր համալսարաններում, ինչպես նաև 2 միջազգային կոնֆերանս: ԵՊՀ «Սոցիալական քաղաքականություն և սոցիալական վարչարարություն» մագիստրոսական ծրագրում ընդգրկված դասախոսների վերապատրաստումները տեղի են ունեցել Մեծ Բրիտանիայի **Կուլբրիայի համալսարանում** (2011 թվականի մայիս), Շվեդիայի Թագավորական տեխնիկական համալսարանում (2011 թվականի հոկտեմբեր) և Ռուսիայի **Բաբես-Բոլյայի համալսարանում** (2012 թվականի փետրվար): Յուրաքանչյուր վերապատրաստում կազմակերպվել և իրականացվել է կոնկրետ նպատակով, մասնավորապես, Կուլբրիայի համալսարանում իրականացված վերապատրաստումներն ուղղված էին մասնակիցների մասնագիտական գիտելիքների և հմտությունների զարգացմանը: Բաբես Բոլյայի համալսարանում կազմակերպված վերապատրաստումների նպատակը ուսումնական ծրագրեր կազմելու և ուսումնական պլաններ մշակելու վերաբերյալ գիտելիքների փոխանցումն էր, իսկ Շվեդիայի Թագավորական տեխնիկական համալսարանի անձնակազմի կողմից իրականացված վերապատրաստումները տեղեկատվական տեխնոլոգիաներից օգտվելու և կրթական պրոցեսում նորագույն տեխնոլոգիաներ կիրառելու վերաբերյալ էին և ուղղված էին աջակցելու ռեսուրս-կենտրոնների ստեղծմանը:

2012 թվականի հունիսի 26-27-ը Թբիլիսիում տեղի ունեցավ նաև ծրագրով նախատեսված միջազգային գիտաժողովը, որին մասնակցեցին ոչ միայն ծրագրի մասնակից համալսարանների ներկայացուցիչները, այլ նաև պետական և հասարակական կազմակերպությունները ներկայացնող անձինք:

Այսպիսով, «Մագիստրոսական ծրագրեր հանրային առողջության և սոցիալական ծառայությունների գծով 511303-Tempus-1-2010-1-UK-Tempus-JPCR» ծրագրով պլանավորված դասախոսական անձնակազմի վերապատրաստումներն արդեն իսկ իրականացված են, և ծրագրի շրջանակներում բացված մագիստրոսական ծրագիրը սպասարկելու է այդ վերապատրաստումներն անցած դասախոսական անձնակազմը:

## **Ռեսուրս-կենտրոն «Սոցիալական քաղաքականություն և սոցիալական վարչարարություն» մագիստրոսական ծրագրի համար**

«Տեմպուս» ծրագրի նպատակներից է բարձրագույն կրթության ոլորտում լայնածավալ բարեփոխումների իրականացման հարցում աջակցության ցուցաբերումը գործընկերերին: Այդ բարեփոխումները ուղղված են նաև բարձրագույն կրթությունը նորագույն տեխնոլոգիաների կիրառման միջոցով կազմակերպելուն: «Տեմպուս» ծրագրի խնդիրն է ապահովել նորագույն տեխնոլոգիաների մուտքը բարձրագույն կրթության համակարգ: Նմանատիպ խնդիր է դրված նաև Տեմպուս 4-ի շրջանակներում իրականացվող «Մագիստրոսական ծրագրեր հանրային առողջության և սոցիալական ծառայությունների գծով 511303-Tempus-1-2010-1-UK-Tempus-JPCR» ծրագրի մասնակից համալսարանների առջև: Ակնկալվում է, որ «Տեմպուս» ծրագրի կողմից տրամադրվող աջակցությամբ գործընկերերին համալսարանները մագիստրոսական նոր ծրագրեր ստեղծելուն զուգահեռ համալսարաններում պետք է հիմնեն նաև ռեսուրս-կենտրոններ, որոնք հազեցած կլինեն անհրաժեշտ տեխնիկայով և հնարավորություն կընձեռեն ուսումնական գործընթացը կազմակերպել տեխնիկապես հազեցված լսարաններում: ԵՊՀ ղեկավարությունն արդեն իսկ տրամադրել է ռեսուրս-կենտրոնի ստեղծման համար անհրաժեշտ տարածք, որը վերանորոգվել և կահավորվել է «Սոցիալական քաղաքականություն և սոցիալական վարչարարություն» մագիստրոսական ծրագրի ուսանողներին և դասախոսներին ծառայելու համար: ԵՊՀ Սոցիալական աշխատանքի և սոցիալական տեխնոլոգիաների ամբիոնը նախատեսում է «Տեմպուս» ծրագրի աջակցության միջոցով կենտրոնը համալրել կրթական գործընթացներում լայն կիրառում ստացած այնպիսի տեխնիկական միջոցներով, *ինչպիսիք են էլեկտրոնային գրատախտակը, անհատական համակարգիչները, տպիչ, պատճենահանող և սկանավորող սարքերը, պրոյեկտորը և այլն:*

Ռեսուրս կենտրոնում ուսանողների համար պետք է առկա լինեն կարդացվող բոլոր դասընթացների նյութերը տպագիր և էլեկտրոնային ձևով, որոնք օգտագործելով ուսանողները կկարողանան հանձնել նախատեսված քննությունները:

## **«Սոցիալական քաղաքականություն և սոցիալական վարչարարություն» մագիստրոսական ծրագրի զարգացման հեռանկարները և մարտահրավերները**

Միջազգային համագործակցությունը մշտապես հանդիսացել է ազգային մակարդակում բարձրագույն կրթության համակարգի կայացման ու զարգացման հիմնարար գործոն: Այդպիսի համագործակցության լայն հնարավորություն է ընձեռում «Տեմպուս» ծրագիրը, որին 2010 թվականից մասնակցելու միջոցով ԵՊՀ Սոցիալական աշխատանքի և սոցիալական տեխնոլոգիաների ամբիոնը հիմնեց «Սոցիալական քաղաքականություն և սոցիալական վարչարարություն» մագիստրոսական ծրագիրը: Մագիստրոսական ծրագրի ստեղծումը հանդիսանում էր ժամանակի հրամայականը, քանի որ ՀՀ սոցիալական քաղաքականության մշակման և իրականացման ոլորտում ծավալվող արդի բարեփոխումները պահանջում են ոլորտը համալրել այնպիսի մասնագետներով, ովքեր կարող են համադրել տեսական գիտելիքները և ֆորմալ կրթությունը պրակտիկ փորձի հետ:

«Սոցիալական քաղաքականություն և սոցիալական վարչարարություն» մագիստրոսական ծրագրի հետագա զարգացումը էապես կախված է Սոցիալական աշխատանքի և սոցիալական տեխնոլոգիաների ամբիոնի անձնակազմի ամենօրյա համառոտ

տքնաջան աշխատանքից: Իսկ դրա համար անձնակազմի բոլոր անդամներն ունեն անհրաժեշտ նախադրյալներ:

ԵՊՀ «Սոցիալական քաղաքականություն և սոցիալական վարչարարություն» մագիստրոսական ծրագրում ընդգրկվելու համար առավել մանրամասն տեղեկատվություն կարող եք ստանալ՝ զանգահարելով հետևյալ հեռախոսահամարներով՝ (37410)552803, (37410)555779 կամ այցելելով ԵՊՀ պաշտոնական կայք՝ [www.y-su.am](http://www.y-su.am):

## ԵՊՀ Սոցիալական աշխատանքի և սոցիալական տեխնոլոգիաների ամբիոնի գործունեությունը «Տեմպուս» ծրագրի շրջանակներում

Հանդիպումներ և վերապատրաստումներ Մեծ Բրիտանիայի Կոմբրիայի համալսարանում, 2011 թ.



*Վերապատրաստումներ Ռումինիայի Բաբես-Բոլյայի  
համալսարանում*







*Եվրոպայի օրը Երևանում, 2012*

*Տեսպուս ծրագրի տաղավարում*

*Միջազգային գիտաժողով Թբիլիսիում, 2012*



*Հանդիպումներ և քննարկումներ Երևանում, 2011*



*Ռեսուրս-կենտրոն Սոցիալական աշխատանքի բաժնում, Երևանի պետական համալսարան*

